18 Եւ չափն է մասն, եւ մասն ասի հինգ հա-
րիւր[1] ասպարէզ: 19 Եւ ասպարէզն՝ հեռակցու-
թիւն վտաւան [մ]ի[2], եւ ըստ ատաչափութեանն՝
հարիւր եւթն[3] քայլ: 20 Եւ քայլն՝ վեց[4] ոտն, եւ
ոտն՝ վեշտասան[5] մատն: 21 Եւ լինի ասպարէզն
վեց հարիւր քառասուն եւ երեք[6] ոտն՝ միով պա-
կաս: 22 Եւ մղոնն է եւթն[7] ասպարէզ: 23 Իսկ[8]
Պարսիցն[9] ասպարէզն է հարիւր քառասուն եւ
չորս[10] քայլ, եւ [մղոնն][11] գետնաչափութեամբ՝
հազար[12] քայլ: 24 Եւ հրասախն է երեք[13] մղոն:
25 Եւ երկրաչափութեամբ՝ մասն է հինգ հարիւր
ասպարէզ չորեքկուսի[14], որպէս զի լինել մասինն
եւթանասուն եւ մի[15] մղոն եւ չորրեակ յեաւթ-
նեակ[16] եւ քսան եւ ութե[ա]կ[17] մի[18]:

26 [19]Արդ՝ այսպէս չափեցին զերկիր եւ
զծով, սկսեալ յԱյրեալ գաւտոյն, յորում ոչ ինչ
բուսանի՝ Արեգականն ընդ յայն[20] գնալոյ յեղա-
նակէն ամարան, մինչ եւ[21] [3ա] ի ձմեռնա[յ]ինն եւ
անդրէն վերադառնա[յ]: 27 Վասն որո[յ] ասացին
զԱրեգակն շատ փոքր քան զերկիր. քանզի վաթ-
սուն եւ վեց[22] մասն ասեն զԱրեգակն՝ զերկուս
նահանգս ասելով զբովանդակութիւն Արեգա-
կ[ան][23], այսինքն՝ աւթեւանս քառասուն[24]. յորմէ
ըստ հեղման շողոյն նրբացելո[յ] բոլբութեան՝ ա-
սացին զԱյրեցական գաւտ[ւ]ոյն[25], եւ աստի ան-
տի նորա յՈվկիանոս[26] ընդմիջելով զնա ի բ՟նա-
կութենէս[27] եւ ի հարաւա[յ]ին կիսագնդէն, զոր
Ընդդէմ երկիր կոչեցին բ՟նակեցելո[յ][28] երկրիս, մե-
ծութեամբ ոչ ըստ սմա, այլ ըստ հիւսիսա[յ]ին կի-
սագնդին, զորս[29] կոչեն Գաւսացեալ[30], քանզի նմա
ասեն փոքրագոյն գծագրիլ, վասն անձուկ գոլո[յ]
բոլորակին, եւ ընդդէմ[31] նա, նմանապէս նորին ի
հարաւա[յ]ին եզրն, զոր կոչեն Յա[մա]քեալ[32]:

28 [33]Եւ ոչ միայն զԱյրեցեալ գաւտե[ա]ւն[34]
[ասեն զՈվկիանոս][35], այլ եւ զամենայն աշ-
խարհաւ շուրջ ասեն բնակեալ: 29 Զոր եւ Կոս-
տանդիանոս Անտիոքացի ի «Քրիստոնէական
տեղագրութեան», որ ասաց զտապանն յԱրեւե-
լ[ե]ան երկրէն[36] առ մեզ անցեալ: 30 Բայց Պտ-
ղոմէոս[37], որոյ արք բազմաշրջութեամբ զամե-

1 V շ
2 VS վտաւանի փխ վտաւան [մ]ի (վեր. Երեմեանի՝ ըստ համառօտի)
3 V ճէ, S հարիւր եօթն փխ հարիւր եւթն (վեր.՝ ըստ այլոց, օր.՝ նախ. Ա.8, Բ.10, 16, 18)
4 V զ
5 V ժզ
6 V ոխգ
7 V է, S եօթն փխ եւթն (վեր.՝ ըստ այլոց, օր.՝ նախ. Ա.8, Բ.10, 16, 18)
8 V-ի Ի-ն կարմիր գլխատառով է (պարբ-ն նշան)
9 Համառօտում՝ ասպարիզաց, որը նշել է Սուքրեանը. «Այլ Օր. ասեն ասպարիզաց ասպարէզն»
10 V ճխդ
11 VS չիք մղոնն (վեր. Երեմեանի՝ ըստ յաջորդի. տե՛ս «Մղոնաչափք»-ում՝ նախ. Զ.5)
12 V ռ
13 V գ
14 V շ ասպարէս չորէքկուսի փխ հինգ հարիւր ասպարէզ չորեքկուսի (վեր. Սուքրեանի)
15 V հա, S եօթանասուն եւ մի փխ եւթանասուն եւ մի (վեր.՝ ըստ այլոց, թէպէտ կայ եւ՝ յեաւթնեակ)
16 S չորեակ եօթնեակ փխ չորրեակ յեաւթնեակ (V)
17 V իըեկ, S քսանեւութեկ փխ քսան եւ ութե[ա]կ (վեր)
18 Սուքրեանը տողատակում ծանօթագրել է «Այլ Օր. չորք եօթն՝ է քսան եւ ութ». դա համառօտն է
19 V-ում Ա-ն գլխատառով եւ կարմրով է (պարբ. նշան). այստեղ Երեմեանը վերականգնում է ենթավերնագիր՝ «Յաղագս չափման տիեզերաց»
20 S այն փխ յայն (V)

21 S մինչեւ փխ մինչ եւ (V)
22 V կզ
23 V Արեգակ [լոկ կլորակ գաղափարագրով] փխ Արեգական (վեր. Սուքրեանի՝ ըստ համառօտի)
24 V խ
25 V գօտոյն փխ գաւտւոյն (վեր. Սուքրեանի)
26 V յՈվկիանոս փխ Ովկիանոս (վեր. Սուքրեանի)
27 V բանակութենէս փխ բնակութենէս (վեր. Սուքր.)
28 V բանակեցելո փխ բնակեցելոյ (վեր. Սուքրեանի)
29 S զոր փխ զորս (V)
30 Սուքրեանը ծանօթագրել է՝ «Այլ Օր. ցամաքեալ»
31 Սուքրեանի ծանօթագրումն է՝ «Ոմանք զդէմսն»
32 V Ցաքեալ [վրան դրուած ուղղման կայծակնաձեւ նշանով] փխ Ցամաքեալ (վեր. Սուքրեանի)
33 Այստեղ Երեմեանը վերականգնելի է համարում ենթավերնագիր՝ «Յաղագս ծովու եւ ցամաքի»
34 V գաւտեւն փխ գաւտեաւն (վեր. Սուքր.՝ ըստ Ա.39)
35 VS չիք ասեն զՈվկիանոս (վեր. Երեմ.՝ ըստ համ.)
36 V յԱրեւելան երկրին փխ յԱրեւելեան երկրէն (վեր. Սուքրեանի)
37 Դեռ ըստ Патк. եւ Երեմեանի՝ այս հատուածը համեմատելի է Խորենացու «Պատմութեան» Ա.լ գլխի բնագրի հետ (1913, էջ 83-84)